

Ա. Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

Հ. Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

ԲՐԻՆՁԸ ԵՎ ՆՐԱ  
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՏ  
ՈՂՈՂՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

633.18

5557

F-82 Բոչարյան, Ա. Ա.

Իրիւնք և նրա մշակու-

թումը ուղիղ. Կապիւն.

2 տ. 604.

633-18  
F-82

Ա. Ա. ԲՈԶԱՐՅԱՆ

ՅԵՌԻՆՆԵՆԻ 1942

# ԲՐԻՆՁԸ ԵՎ ՆՐԱ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՏ ՈՂՈՂՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԿԱԶՄՎԱԾ ԵՆ ԱՆԿԻՆ ԴԱՏԵՎԱՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ, ՆԵՐԿԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՍԻ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 1941, 1942 ԵՎ 1943 ԹՎԵՐԻ ՓՈՐՁԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՍԱՆ ԿՐԱ

537



A 18314

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԳԵՏՂՐԱՏ

1944

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Բրնճի նշանակութիւնը ժողովրդական տնտեսութեան համար . . . . .	3
Բրնճի կուլտուրայի տարածումը . . . . .	5
Բրնճինու քերքատվութիւնը . . . . .	5
Բրնճինու ըլուտի բուսարանական համառոտ նկարագրութիւնը . . . . .	6
Հայաստանի ՍՍՌ-ում մշակվող բրնճի հիմնական սորտերը . . . . .	7
Բրնճինու Ղերմութեան պահանջը . . . . .	10
Հողային պայմանները . . . . .	10
Բրնճինու ջրի պահանջը . . . . .	11
Բրնճի յնդհատ ոգոգումը . . . . .	12
Հողի մշակութիւնը . . . . .	13
Սերմի նախապատրաստումը . . . . .	19
Յանքի ժամանակը . . . . .	21
Յանքի ձևերը . . . . .	22
Յանքի նսրման . . . . .	24
Պայթար մոլախոտերի դեմ . . . . .	25
Պարարտոցումը . . . . .	29
Յանքաշրջանառութիւնը . . . . .	30
Բերքահավաքը և կախումը . . . . .	32
Սերմագաշտերի առանձնացումը . . . . .	33
Ընդհատ ոգոգման աշխատանքի կազմակերպումը . . . . .	35

Պատ. խմբագիր՝ Գ. Ազաթանյան

ՎՅ 1756/ Պատվեր 382. Տիրաժ 1000. Տպագրական 2 1/2 ժամուկ.  
Լեզիկնադային 1,7 ժամ. Ստորագրված է տպագրութեան 10/VII-64 թ.

Հայկեօնրատի տպարան, Երևան

## ԲՐԵՆԻ ԿԵՆՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺՂՈՎԲՈՒԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բրենձի կուրսուրան շատ վաղ ժամանակներից մշակվում է հարավ-արևմտյան Ասիայում: Հետազոտութունները ցույց են տվել, որ մեր տարեթվից 3000 տարի առաջ այդ կուրսուրան մշակվելիս է եղել Հնդկաստանում և Չինաստանում: Ենթադրվում է, որ բրենձի կուրսուրան տարածվել է Հնդկաստանից դեպի Միջին Ասիա և Պարսկաստան, իսկ այստեղից էլ Ազրբեջան և Հայաստան:

Բրենձը պատկանում է հացահատիկների ընտանիքին և մշակվում է հիմնականում հատիկ ստանալու համար: Բրենձը կազմում է երկրադուրի վրա ապրող ազգաբնակչության մոտ 50%—ի դիտարկող աննդամթևերը: Երա հատիկից ստացած ձափաբը—բրենձը արժեքավոր աննդանյութ է մարդկանց համար:

Կարելուց հետո բրենձի բույսից ստացվում է հատիկ, որը պատած է լինում թեփուկով: Այդպիսի թեփուկավորված հատիկն ընդունված է անոթանել չալթուկ, իսկ թեփուկից մաքրված հատիկը—ձափաբը՝ բրենձ: Չալթուկը բրենձ դարձնելու համար թեփահան են անում հատուկ մեքենաներով, որի ժամանակ ստացվում է երեք տեսակի հումույթ՝, բրենձ, բրենձի ալյուր և թևի:

Բրենձը, որ չալթուկից ստացվող հիմնական հումույթն է, կազմում է չալթուկի քաշի 70—75% և իր մեջ պարունակում է հետևյալ միացութունները՝

Ածխածրեր	— 75,20%
Սպիտակուցային նյութեր	— 7,7%
Ճարպ	— 0,4%
Թաղանթանյութ	— 2,2%
Մոխիր	— 0,5%
Ջուր	— 14%

Բրինձը մարդու օրգանիզմի կողմից հեշտ մարտիկու և յուրացվելու տեսակետից բարձր է դասվում մի շարք այլ անդամաթերքներից: Նրա 100 մաս չոր նյութից մարդու օրգանիզմի կողմից յուրացվում է 95,9 մասը, իսկ իր կայորեականությամբ (34594) բրինձը համարյա թե հալանարվում է ցարենին (3,610): Ենթահիվ նրա հեշտ մարտիկու հասկություններին, բրինձը համարվում է մարդու ամենաարժեքավոր աննդանյութերից մեկը: Բրինձը իրենարկան աննդանյութ է այն մարդկանց համար, որոնք սասնագում են սրտի, երիկամուռքների, ստամոքսի և լյարդի հիվանդություններով:

Չալթուկի մարումից ստացած կրկորդ հումուլթը, այն է բրնձի ալյուրը հիմնականում թողկացած է հատիկի սողմից և պտղաթաղանթից: Բրնձի ալյուրը շատ հարուստ է աննդանյութերով: Նա պարունակում է իր մեջ՝

Սպիտակուցային նյութեր . . . . .	14%
ձարոլ . . . . .	15%

Բացի այդ, բրնձի ալյուրը հարուստ է գլխավորներով և ուրիշ արժեքավոր միացություններով: Դրա համար բրնձի ալյուրը մատղանների և կաթնատու կովերի համար հանդիսանում է բարձրարժեք անասնակեր:

Չալթուկի երրորդ հումուլթը՝ բրնձի թեիը կազմում է չալթուկի բաշի 18—25%, որը աննդանյութերով խիստ աղքատ վիճակու հետևանքով օգտագործվում է սրպես մասեղանյութ և այլ նպատակների համար:

Բրնձի տեսակադրումից ստացած նրա մանրուքները վերամշակման են ենթարկում և պատրաստում են նրանից բրնձի օսյա (կրակմայ), որը մեծ գործածություն ունի բժշկության մեջ հատկապես հիվանդների բուժման համար: Բացի այդ, բրնձի օտան օգտագործվում է նաև պողպալի արտադրության համար:

Մեծ նշանակություն ունի նաև բրնձի բուշի ձողոր: Նա օգտագործվում է սրպես անասնակեր և ցամբար: Բացի այդ, նրա ձղնատից պատրաստում են դամբյուղներ, գլխարկներ, խրսիներ, պարկեր, ծանրացների փաթեթներ, պարան, բարձրորակ թղթի տեսակներ և այլն:

Բրնձի կուլտուրայի այսպիսի բազմակողմանի օգտակարությունը հասկանալիս մեծ կարևորություն է ստանում Հայրենական մեծ պատերազմի տարիներին, որի համար այժմ ակիլի մեծ ուշադրություն է դարձվում այս կուլտուրայի զարգացման վրա:

### ԲՐՆՁԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Համաշխարհային արտադրություն մեջ բրնձի կուլտուրան իր ցանքի տարածությունը և արտադրանքի քանակով հացահատիկային կուլտուրաների մեջ բնում է երրորդ տեղը (ցորենից և եգիպտացորենից հետո): Ներկայումս բրնձենու ցանքաքի տարածությունը երկրաչորի վրա հասնում է մինչև 95—97 միլիոն հեկտարի:

ՍՍՌՄ-ում բրնձի ցանքի տարածությունը 1938 թվին հասնում էր 163,400 հեկտարի, որից՝

Ուղբեկահան ՍՍՌ	— 80,000	հեկտար
Այրբեջանական	» 24,900	»
Ղազախստանի	» 23,200	»
Կրասնոդարի երկրամաս	— 7,300	»
Մերձծովյան մարզ	— 4,400	»
Դաղստան	— 2,700	»
Այլ երկրամասեր և մարզեր	— 20,000	»
Հայկական ՍՍՌ	— 900	»

Ինչպես ժողովրդական տնտեսության բարձր բնագալստնություն, այնպես էլ բրնձի մշակության և արտադրանքի ապարիզում ՍՍՌՄ խոշոր հաջողություններ է ձևաք բերել:

Վերջին տարիների ընթացքում բրնձի կուլտուրան սկսել է տարածվել արավային տար երկրներից դեպի հյուսիս քնկած ցուրտ մարզերն ու չըջանները, հասնելով մինչև Կույբեշև, Կուրսկ, Ռյազան և հյուսիս արածավոզ այլ վայրեր:

### ԲՐՆՁՆՆՈՒ ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հացահատիկային կուլտուրաների մեջ բրնձը համարվում է ամենաբերատու կուլտուրաներից մեկը: Հայկական ՍՍՌ-ում

1942 թ. բրնձի միջին բերքատվությունը եղել է 36,5 ցենտներ, Ադրբեջանական ՄԱՌ-ում 1939 թվին 23,900 հեկտար բրնձի տարածությունից ստացել են հեկտարից 24 ցենտներ բերք, իսկ 1940 թվին՝ 23,9 ցենտներ:

Բրնձի բերքատվության բարձրացման գործում առաջնակարգ դեր են խաղացել առաջավոր կոլտողները, որոնց օրինակին են հետևում ամբողջ աշխատավորությունը: Այդպեսի կոլտողների թվին են պատկանում Կզիլ Օրդինսկի մարզի Սուր-Տյուրքենսկի ՄՏԻ-ի Ինտերնացիոնալ կոլտողը, որը 1938 թվին բրնձի ցանքսի մեկ հեկտարից ստացել է 102 ցենտ. բերք: Կրասնուդարի երկրամասի Իվանովսկի շրջանի Ստալինի անվան կոլտողը 1938 թվին հեկտարից ստացել է 107 ցենտ. բերք: Հայկական ՄԱՌ-ի բրնձացան Չանգիբասարի շրջանի Ծնդիջա գյուղի Մոլոտովի անվան կոլտողը 1942 թվին հեկտարից ստացել է 50,2 ցենտ. բերք: Նույն շրջանի Ջարաչարա կոլտողը 1942 թ. հեկտարից ստացել է 44 ցենտ. բերք:

Կարելի է միանգամայն համարձակ ասել, որ մեր սեպուր-լիկայի բոլոր շրնձացան կոլտողները համար ստեղծված են անհրաժեշտ հնարավորությունները, իրենց բրնձի ցանքսի բերքատվությունը հասնելու և դերադանդելու առաջավոր կոլտողների բերքատվության մակարդակին, միայն անհրաժեշտ է ժամանակին և որակով կիրառել բրնձի մշակման համար պահանջվող ագրոտեխնիկական մեթոդաբանները:

## ԲՐՆՁԵՆՈՒ ԲՈՒՅՍԻ ԲՈՒՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՆԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բրնձը միամյա բույս է: Նրա արմատները փնջածև են և նրանց զարգացման հզորությունը, քանակը, խորությունը և տարածման չափը հոդում հիմնականում կախված է հողի սևահից, պարբրատացումից, ջրի և ջերմության ակտիվից, սուրճից և նման այլ պատճառներից:

Բրնձի ցողունն ունի 3—5 միջնանդույց, որոնց ստորին միջնանդույցները ավելի կարծ են, քան վերինները: Ինչպես հանդույցները, այնպես էլ միջնանդույցային տարածությունները կտրուց են սեննալ տարբեր դունավորում, դուր-գեղնագույնից մինչև սև դույն:

Բրնձի ծաղկափթթությունը կտշվում է հուրանի հուրանի գլխալուր ասանցքը կադրում է ցողունի շարանակությունը: Հուրանը ճյուղավորվում է ցողունը վերջանում են միջանի հասկիկներով: Բրնձի հասկիկը մի ծաղկանի է և յուրաքանչյուր ծաղիկ բացի հասկիկային թույլ դարձացած թեփուկներից ունենում է նաև երկու դարձացած ծաղկաթևիուկ, վեց սուկչք, մեկ վարսանդ, սրմեք վերջանում են երկու փետրածե սպիտու: Ծաղկի փոշոտումից կադրակերպվում է բրնձի հատիկը—պտուղը: Բրնձի հատիկի երկարությունը, հաստությունը, ձևը, քիստալուր և անքիստ լինելը, դույսը կախված են բրնձի կուլտուրայի տեսակից, ալյատեսակից և սորտից, ինչպես նաև մշակման եղանակներից:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՈՒՄ ՄՇԱՆՎՈՂ ԲՐՆՁԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՈՐՏԵՐԸ

Բրնձի սորտերը երկրագնի վրա հաշվում են հարյուրներով: Բրնձի սորտերը որոշելիս հաշիվ է առնվում ոչ միայն նրանց մորֆոլոգիական արտաքին նշանները, այլ նաև բիոլոգիական հատկութունները, այն է՝ հատիկի որակը, բույսի պահանջը գետի հողը, կլիման, նրա բերքամուլությունը, վեգետացիայի տեսողությունը, պահանջը գետի ջուրը, պտուկի, և հիվանդութունների հանդեպ նրա զիմացկունությունը և այլն: Իստոգությունները ցույց են տվել, որ սորտերի որոշման համար հարմարեցրեն կայուն ցուցանիչ կառույց է համարել հատիկի երկարությունը, քաշությունը և դրանց հարաբերությունը:

Ենթյով սորտերի որոշման այդպիսի ցուցանիչներից, հաշված է, որ Անդրկովկասում, հարավային Ադրբեջանում և Հայաստանում դրսևություն ունի բրնձի մոտ 60 սորտ, որոնցից մեկ մոտ Հայաստանում մշակվում են հիմնականում հետևյալ սորտերը. (պտուղայացիա):

Այ-կըն (գերակշռում է V. Vulgaris Körn): Չալթուկի հատիկի երկարությունը հախասար է 7,85 մմ., խիլ լայնությունը՝ 3,77 մմ. երկարության և լայնության հարաբերությունը (երկ./լայն.) հախասար է 2,1: Ասանց թեփուկի հատիկի (բրնձի) երկարությունը համոտ է 5,65 մմ., խիլ լայնությունը՝ 3,3 մմ. (երկ./լայն.—1,7): Բացարձակ քաշը (1600 հատիկի մաքուր

բաշք) հասնում է 32 գրամի: Թեփուկը կազմում է չափուկի բաշի 20,10%: Աղ-կլշղ սորաք բերված է Չաքաթալա—Նուխու շրջանից: Մեղմամ աչգ սորաք հասնում է մոտ 120 օրում: Բույթ բարձրությունը հասնում է մոտ մեկ մետրի: Հուրանն ունենում է միջին հուշվող մոտ 100 հատիկ: Աղ-կլշղ սորաք համարվում է տեղական ամենաբերատու սորաներից մեկը: Նա բազականին դիմացկուն է պաակելու և սնկային հիվանդությունների հանդեպ:

Կրմզի-կլշղ (գերակշռում է *Verythroceros Körn*):—Չափուկի հատիկի երկարությունը հասնում է 7,7 մմ., իսկ լայնությունը՝ 3,6 մմ. (երկ./լայն. համասար է 2,1): Առանց թեփուկի հատիկի երկարությունը հասնում է—5—45 մմ., լայնությունը՝ 3,3 մմ. (երկ./լայնութ. — 1,6): Հատիկների բացարձակ բաշք—30,7 գր., թեփուկը կազմում է զրնձի հատիկի բաշի 19,20%-ը: Այդ սորաք համարվում է Չաքաթալա—Նուխու շրջանից բերված սորա: Մեղ մոտ նա հասունանում է 115 օրում: Բույթի բարձրությունը հասնում է մինչև մեկ մետրի, հուրանն ունենում է մոտ 85 հատիկի, Կրմզի-կլշղ սորաք հակում ունի պաակելու: Համարվում է տեղական բերատու սորաներից մեկը:

Կարա-կլշղ (գերակշռում է *V. janthocero Körn*):—Չափուկի հատիկի երկարությունը՝ 7,0 մմ., լայնությունը՝ 4,0 մմ. (երկ./լայն.—1,75): Առանց թեփուկի հատիկի երկարությունը՝ 5,7 մմ., լայնությունը՝ 3,2 մմ. (երկ./լայն.—1,7 մմ.): Բացարձակ բաշք 31,3 գր.: Թեփուկը կազմում է չափուկի բաշի 20,1%: Բերված է դարձյալ Չաքաթալա—Նուխու շրջաններից, հասնում է մեղ մոտ 115—120 օրում: Բարձրությունը հասնում է մոտ մեկ մետրի, իսկ հուրանի վրա հատիկների թիվը հասնում է 70—75: Հատիկներն ազդակնման են, բույսը բազականին դիմացկուն է պաակելու և սնկային հիվանդությունների հանդեպ: Հայաստանի հողակլիմայական պայմանների համար հետանկարային սորա կարելի է համարել:

Աղբրեջանի պայմաններում մեծ հաջողություն պատյած սորաներից են Ամուլա (գերակշռում է *V. Amaura Alef*): Չափուկի հատիկի երկարությունը համասար է 9,4 մմ., լայնությունը՝ 4,2 մմ. (երկ./լայն.—2,2): Առանց թեփուկի հատիկի

Երկարությունը՝ 6,8 մմ., լայնությունը՝—3,5 մմ., (Երկ./լայն. 1,9), բացարձակ քաշը՝ 42,2 գր.: Թեփը կազմում է հատիկի քաշի 24,1%: Աղբրեջանական ՍՍՌ-ի Լենքորանի շրջանում համարվում է բարձր բերքատու սորտերից մեկը: Երկայուն ցանկում է նաև մեր հարևան Կասիկեանում: Աբուլան հասունանում է 115 օրում: Բույսի բարձրությունը հասնում է 130 սմ.: Հուրանն ունենում է 50—55 հատիկ: Այդ սորտը կայուն է պտուկելուն և սնկային հիվանդություններին: Աբուլա սորտը մեղմոր—Հայաստանում մշակվել է առաջին անգամ և համարվել է բարձր բերքատու սորտերից մեկը:

Մադրի-Պանսկիյ պարսիկական (գերակշռում է V. matica Vav): Չափուկի հատիկի երկարությունը՝—9,3 մմ., լայնությունը՝ 2,5 մմ. (Երկ./լայն.—3,2): Հատիկների բացարձակ քաշը՝ 20,5 գր., թեփի քաշը 21,3%: Հատիկը թափանցիկ է, լիով ապակենման: Համարվում է Պարսկաստանից բերված սորտ: Բույսն ունի մեկ մեծից այլևի բարձրագլուց: Հուրանն ունի մոտ 80 հատիկ: Պտուկերուն և սնկային հիվանդություններին դականին դիմացկուն է: Հասունանում է 115—120 օրում:

Ամբարբու-սպիտակ—(գերակշռում է V. italica Alef): Չափուկի հատիկի երկարությունը՝—7,8 մմ., լայնությունը՝ 3,2 մմ. (Երկ./լայն.—2,4): Հատիկի երկարությունը 6,0 մմ., լայնությունը 2,9 մմ. (Երկ./լայն. 2,0): Լենքորանի շրջանի սորտ է և հասունանում է 100—110 օրում: Բույսի բարձրությունը հասնում է մոտ 120 սմ.: Հուրանն ունենում է միջին հաշվով 70 հատիկ: Հատիկը կիսաթափանցիկ է: Պտուկերուն և սնկային հիվանդությունների հանդեպ կայուն է: Համարվում է վաղահաս և քիչ ջրապահանջ սորտ: Բնդհատ բուսման պայմաններում կարևոր սորտ է հանդիսանում:

Հայաստանի հողակլիմայական պայմանների համար հեռանկարային սորտ կարելի է համարել նաև՝ «Չեյլաթ», «Կենդզո» վաղահաս, սակավ ջրապահանջ, չզառկող սորտերը:

Մոցիսլիստական անտեսության պայմաններում բրնձի մշակութայինը պետք է տարվի մեքենայացման ուղղությամբ, այդ տեսակետից սորտի շնորհիվ համարվող հաշվի պիտի ամենել ոչ միայն նրա բերքատվությունը և հատիկի որակը, այլ նաև

պատկերու նկատմամբ նրա դիմացկունությունը, որովհետև  
պատկած բրնձի ցանքի բերքահատարը հնարավոր չէ լինում մե-  
քենայացման ենթարկելու: (

### ԲՐՆՁՆՈՒ ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՐ

Բրինձը համարվում է տաք երկրի բույս, սակայն տարբեր  
ստրտեր տարբեր հախով են ջերմություն պահանջում: Պետք է  
նկատի ունենայ, որ բարձր ջերմաստիճանի նկատմամբ բրնձի  
բույսը դիմացկուն է, իսկ ցածր ջերմաստիճանների հանդեպ նա  
չատ զգայուն է և շատ շուտ ենթարկվում է ցրտահարության:

Դիտահետազոտական հիմնարկների կողմից հաստատված է,  
որ բրինձը ծրման համար պահանջում է 11—12 աստիճանից ոչ  
պակաս ջերմություն, թփակայման համար՝ 13—14 աստիճան,  
իսկ ծաղիկման համար՝ 15—16 աստիճան: Հարյուրամուսում և  
Ագրբեջանում մշակվող բրնձի ստրտերն իրենց վեղեկացիան  
ախարտելու համար պահանջում են 90—130 օր և վեղեկացիայի  
բնիթացքում ջերմաստիճանների դումարը լինում է ոչ պակաս  
2500—3000 աստիճանից:

Սակայն կան բրնձի այնպիսի ուշահաս ստրտեր, որոնց վե-  
ղեկացիան տևում է շատ երկար, իսկ ջերմաստիճանների դու-  
մարը հասնում է մոտ 4500:

### ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բրնձի կուրտուբան մեծ հաջողությամբ կարող է մշակվել  
տարբեր հողերում, բացի անրերրի, ափազային, խճային հողե-  
րից: Սակայն բարձր բերք ստացվում է աթոթով հարուստ, բեր-  
րի հողերում: Բրնձին ու մշակութային համար հողը ընտրելիս  
պետք է ուշադրություն դարձնել նաև հողի ենթաշերտի կազ-  
մության վրա: Մճառ, ալագրտ, ընդհանրապես ուժեղ թճվան-  
ցիկ ենթաշերտ ունեցող հողերը պիտանի չեն բրնձին ու մշակու-  
թյան համար, որովհետև այդպիսի հողերը հեշտ բաց են թող-  
նում ամբողջ ջուրը և դրանով առաջացնում ջրի դերամաս և  
համարի էլ ցանքերի չորացում: Բրնձի մշակութային համար պի-  
տանի չեն նաև թթու, սուրֆային և աղուտ հողերը:

Տարածված այն կարծիքը, թե բրինձը պահանջում է ճաճ-

Տաշին հող, հիմնովին սխալ է: Փորձերը ցույց են տվել, որ բրնձի բերքատվությունը բարձր է լինում ոչ ճաշճոս, Ժամանակին և սխտեմատիկ կերպով ջրվող հողերում: Միշտ նկատվել է, որ ճաշճոս տեղերում ոչ միայն բրնձի բերքատվությունն է պակաս լինում, այլ նաև բերքի որակն է լինում ցածր: Այդ տեսակետից բրնձի կուլտուրայի բարձր բերքատվությունն ապահովելու խնդիրը պահանջ է առաջացնում այդ կուլտուրան մտցնելու համապատասխան ցանքաչրջանառություն մեջ, ճիշտ լեկտիվարվելով ՍՍՌՄ Ժողովուրդների և Համ(Կր)Պ Կենտրոնի 1943 թ. մայրի որոշմամբ, որտեղ սահմանված է «...արգելել... աղբուցման և ճաշճոսան երթակա հողերում բրնձի ցանք հատարելը: Բրնձ ցանելու համար հատկացնել բամբակի ցանքերից առանձնացված հողերը, որոնք աղանդված են մակերեսային և ստորերկրյա ջրերի վանման ցանցով»:

### ԲՐՆՁԻ ԶՐԻ ՊԱՀԱՆՁԸ

Բրնձենին իր զարգացման համար շատ ավելի ջրի պահանջ է դրում, քան մեկ մաս մշակվող որևէ այլ գյուղատնտեսական կուլտուրա: Բրնձը կարելի է մշակել ջրովի և անջրգի պայմաններում: Անջրգի բրնձը մշակվում է այն վայրերում, որտեղ մթնաբուսային տեղումները բրնձի վեգետացիայի բնթացում հասնում են 1500—3000 միլիմետրի: Անդրկովկասում մշակվող բրնձի սորտերը պահանջում են արհեստական ջրոռում, սակայն նրանց մեջ էլ կան տարբեր չափի ոռոգման ջուր պահանջող սորտեր: Հայաստանի պայմաններում ներկայիս մշակվող բրնձի սորտերը պահանջում են շատ ջուր պահանջող սորտերի շարքին:

Բրնձի ջրի պահանջը բախարարելու համար գոյություն ունի մշտական ոլորման կարգը, որի դեպքում բրնձինու դաշտն ամբողջ վեգետացիայի ընթացքում պահպանվում է 15—25 սանտիմետր հաստություն ջրի շերտի տակ: Ոռոգման այդ կարգը առհասարակ կերպով ստեղծում է ճաշճոսների բնթարձակ տարածություններ, որոնք բարենպաստ միջավայր են մարաբխ հիվանդությունն առաջացնող «Անոֆելես» տեսակի մոծակի

Թրթուաների արագ դարգացման համար: Այդպիսով բրնձացան շրջանները արհեստակարար են վեր են ածվում մալարիայի տարածման օջախների:

Հայկական ՍՍԻ Առօրյակում աստի Տրոպիկալիտուտի կողմից բրնձի դաշտերում տարված ուսումնասիրությունները պարզել են, որ մշտական սողովող բրնձի դաշտի մեկ քառակուսի մետրում ապրում են մալարիա տարածող մոծակներից 245 կենդանի Թրթուր: Այդ նույն ուսումնասիրությունները պարզել են, որ անկասկած ջրօգտագործման հետևանքով դաշտում աննշանաբար լճացած և ճահճացած տարածությունների մեկ քառակուսի մետրում գտնվում են 209 Թրթուր, իսկ անխամ օգտագործվող ջրոտար առուների մեջ 333 Թրթուր: Իրա հետ միասին եթե հաշվի առնենք, որ մոծակներն այդ բրնձի վեգետացիայի ընթացքում տալիս են միջանի սերունդ, այդտեղից արդեն պարզ կլինի, թե բրնձնուր դաշտի մշտական սողովման ջրային ռեժիմը և անկասկած ջրօգտագործումը ինչպես է հակադաս դեր են խաղում մալարիա հիվանդության տարածման գործում: Ինտրոդուկցիաները ցույց են տվել նաև, որ այդպիսի ջրոտորման կարգը պատճառ է դառնում ջրի ոչ ռացիոնալ օգտագործման, վարելահողերի ճահճացման և աղիացման:

Վերջին տարիները ինչպես անտանախմամբ, այնպես էլ ՍՍՄՄ-ում, այդ թվում և Հայկական ՍՍԻ-ում գիտահետազոտական հիմնարկների կողմից ուղարկություն է դարձվում օտարման ջրոտորման այնպիսի կարգ, որը մեկ կողմից կանխի մոծակների զարգացման հարավորությունները և մյուս կողմից պահպանի բրնձնուր լարձը բերքատվությունը:

Այդ խնդրով Հայաստանի հողակլիմայական պայմաններում վերջին տարիները զբաղվել են նախկին դաշտավարական կայաներ, ներկայիս Հայկական ՍՍԻ-ի Ակադեմիայի Երկրագործական Ինստիտուտը և Առօրյակում աստի Տրոպիկալիտուտը, որոնց գիտահետազոտական համառոտ աշխատանքի միջոցով հարավոր է դարձել անախմամբ բրնձի բուսատնային ուսումնասիրման մի այնպիսի ռեժիմ, որը յուրով է բրնձի կուլտուրայի մշակութային առաջ ծառայած անհետաձգելի և կարևոր խնդիրները:

Բրնձենու ընդհատ ողողման սխտեմը տարբերվում է մինչև հիմա գոյություն ունեցող անընդհատ ողողման սխեմից նրանով, որ ընդհատ ողողման դեպքում բրնձենու ցանքահերի վրա առաջացած ջրի շերտը պահպանվում է որոշ ժամանակ, որից հետո ջուրը հեռացվում է դաշտից, ցամաքեցվում միջանի օր, նորից ջուրը անց է թողնվում ցանքի վրա և նորից ցամաքեցվում։ Ընդհատ ողողման սխեմը ավելի է պահպանում ջրը և արագացնում է բրնձի բերքահավաքը։

Այդպիսի սխտեմի հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ երբ բրնձենու դաշտը միջանի օրով ցամաքեցվում է, ջրում գտնված մոծակների թրթուռները, զրկվելով իրենց սննդամեջից, ջրային միջավայրից և հեթարկվելով արեգակի ճառագայթների ներգործության, ոչնչանում են։

Փորձերը ցույց են տվել, որ բրնձի դաշտի ողողման առաջին օրից մինչև 7-րդ օրը մարդերում չի նկատվում հասունացած (այսինչի մոծակ դառնալու նախափուլին ստադիան հասած) ոչ մի թրթուռ։ Ջրման 8-րդ օրը հասունացած թրթուռների քանակը կազմում է ընդհանուր թրթուռների քանակի 0,3%։ Ջրման 11-րդ օրը հասունացած թրթուռները կազմում են 7,6%-ը, իսկ մշտական ողողվող մարդերում մոծակների թրթուռների քանակը հասնում է 24,3%։ Այդ տվյալներից երևում է, որ 8 օրվա տևողությամբ բրնձի դաշտի ողողումը այն սահման է, որից հետո դաշտը պետք է ցամաքեցնել մոծակների թրթուռները ոչնչացնելու համար։ Փորձերից պարզվել է նաև, որ 5 օրվա տևողությամբ ցամաքեցումը միանգամայն ապահովում է բրնձենու դաշտում գտնված ամեն հասակի Անոֆելես մոծակների թրթուռների ոչնչացմանը։

Այդ աշխատանքներին զուգահեռ լայն կիրառվում են ստադիանի օրվան է ենթարկվել նաև ընդհատ ողողման արդեցությունը բույսի զարգացման և բերքատվության վրա։ Յուրջ տարու համար, թե ինչպես է աչդել ընդհատ ողողման ջրային սխեմը բրնձի բերքի քանակի և որակի վրա, բերում ենք Ղամաթլուի շրջանի Թոխանչալուի և Չանդիրասարի շրջանի Ախրամազլուի կոլեկտիվներում 1942 թվին մեր դրած փորձերի արդյունքները։

Փարձի վարիանները Ջրման օրերի տե- վադու թյունը	Մեկ հեկտարի բերքա- տվությունը ցենտներով		Խաղողների ընդ- ամուսնությունը 1000 հեկտարի համար	Շ.Պ. % - Ը	Մաքուր բերքը % - Ը
	Ս.խահա- գալու	Թոխան- ցալու			
8/4	54,1	53,8	32,6	20,2	79,92
8/5	52,4	52,2	31,85	20,34	78,66
8/6	49,7	43,8	32,53	20,41	78,59
12/4	55,2	—	32,83	18,7	81,3
12/5	54,1	52,8	33,7	19,96	80,04
12/6	46,5	41,6	32,0	19,67	80,33
Մշտական սողողած (հոնորար)	55,8	53,5	32,63	19,14	80,86

Այս ավյաններից պարզվում է, որ յուրաքանչյուր անգամ 8 օր սողողելու և 5 օր ցամաքեցնելու դեպքում մոռակների թրթուռների վերացման հետ միասին ապահովվում է նաև բրնձենու դաշտի բարձր բերքատվությունը:

Կատարած դիտողությունները ցույց են տվել, որ բրնձենու ցանքի ընդհանուր սողողման սխեմայի պայմաններում պետք է կիրառել հետևյալ ջրային սխեման: Սկզբնական շրջանում մինչև չափավոր սեզանի ծրուածք, մոտավորապես ցանքի օրից սկսած 4—5 օր շարունակ պետք է բրնձի դաշտը թողնել 7—10 աստիճանային բարձրություն ունեցող ջրի շերտի տակ, որից հետո անհրաժեշտ է դաշտի ջուրը 4—5 օրով ցամաքեցնել, որպեսզի ցանված սեզանի այն մասը, որը չի ծածկված հողով կամ անիզով շերտով, ծխելու մասնանակ հեշտ կերպով չափոյնի հողից և ջրի մեջ լողալով չբռնի ու սառնի դաշտից դուրս: Եման դրու-  
թյունը համեմատելով համար բաժանան է դաշտը 4—5 օրով ցամա-  
քեցնել և հետափորություն տալ սերմի ծիրին արմատակալելու  
և ամրանալու հողի մեջ: Դրանից հետո մինչև բրնձի հարունաց  
յունը պարբերաբար բրնձի դաշտը պետք է թողնել 8 օր ան-

դուք յամբ 15 սանտիմետր հաստութեան ջրի շերտի տակ և 5 օր տևողութեամբ ցամաքեցրած վիճակում:

Իրնձի այն ցանքերը, որոնք կատարված են թիթև ալալգա-  
յին հողում, որոնց ստորերկրյա ջրերը դանվում են 1,5—2 մետր-  
ից ավելի խոր և շատ շատ մաքրվում են ջրի մնացորդներից,  
կարելի է դաշտի ցամաքեցման տևողութեանը 5 օրվա զիմաց  
հասցնել 4 օրի:

Ընդհատ ողողման սխեմանից բարձր էֆեկտ ստանալու հա-  
մար պահանջվում է՝

1. Բարձր մարզերի հարթեցումը, հալաաարեցումը կատարել  
այն աստիճանի որակով, որ ջրման և ցամաքեցման ժամանակ  
մարզերը միաժամանակ հալաաարաչափ ջուր ստանան ու հալա-  
աարաչափ էլ ցամաքեցվեն, չունենալով մարզերի մեջ ոչ մի խոր-  
դուրորդութեաններ և լճակների ստացացման պեղքեր:

2. Յանքին հատկացնել բամբակից աղտաված այն հողերը,  
որոնք ապահովված են մակերեսային և պտերերկրյա ջրերի  
վանման ցանցով, վերջիններս պահպանելով կարգավորված վի-  
ճակում:


3. Մարդերն անխափան կապել ջրատարների և ջրհավաք  
աղուների հետ այն հաշվով, որ պահանջված ժամանակ հնարա-  
վոր լինի ջուրը կտրել և կուպել:

4. Կանխել դաշտի շրջակայքում առաջացող աճեն տեսակի  
հաճապումները, ջրակուտակումները, որոնք հողերի աղիացման  
և մոճակների զարգացման հիմնական օջախներն են հանդիսա-  
նում:

5. Դաշտում յուրաքանչյուր ջրվորի տալ ջրման և ցամա-  
քեցման օրացուցային դրաֆիկ և խխտ հետևել, որ ընդհատ  
ողողման պեխիմը կատարվի սահմանված ժամանակին: Ջրուտը  
և ջրհավաք սաունները բացի կարգավորելուց և մաքուր պահե-  
լուց, պետք է նաև դարձան սկզբից նրանց մեջ զարգացնել  
«գամբուղի» տեսակի մանր ձկներ, որոնք ոչնչացնում են մո-  
ճակների թրթուռներին (այդ ձկներով հարուստ են մեր բուժ-  
րակացան շրջանների շատ առուներ):

Իրնձի դաշտը բացի ջրուտը և ջրհավաք սաուններից ունենում  
է նաև ջրբախիչ առու, որտեղից ջուր է մատակարարվում ջրու-

Ճարգերի, ջրտար և ջրհավաք առուների  
սխեման



բլրեր

առուների չափը

ա.	ջրտարի խորությունը	20 - 25 սմ
բ.	ջրհավաքի	35 - 40 "
գ.	ջրաշիջիչի	30 - 35 "
դ.	կուլեկտորի	60 - 70 "

Նկ. 1.

առուներին, և կուլեկտոր առու, որի մեջ հավաքվում է դաշտի  
բոլոր ջրհավաք առուների ջուրը:

Բրնձի ցանքսից դուրս եկած ջուրը չպետք է նորից օգտա-  
գործել բրնձի ցանքերը ջրելու համար, որովհետև այդ ջրի մեջ  
գտնված մոծակների Բրթուռները նորից ընկնելով նպաստափոր  
մեջնայալը կշարունակեն իրենց դարգացման ցիկլը և կդառ-  
նան Թուղ փոծակներ: Այդ տեսակի ջուրը կարելի է օգ-  
տագործել բամբակենու, բոպան-բանջարանոցային և այլ  
կուլտուրաների սոցոլման համար: Ընդհատ ողողման ժամանակ  
մարդերի մեծությունը, ջրաքար և ջրհամար առունների քանակը,  
զիրքը և խորությունը կախված են յուրաքանչյուր գաշտի ա-  
ռանձնահատկությունից, թեքութան աստիճանից, դաշտի ձևից,  
ոտորերկրյա ջրերի խորությունից և այլն:

Բրնձացան կոլտոզների և սովկոզների վորձերը ցույց են  
տվել, որ հարթ ուղիվ ունեցող դաշտերում մարդերի մեծու-  
թյունը, ճիշտ պլանիբոլկայի պայմաններում, կարելի է հասց-  
նել 0,25—4 հեկտարի: Պետք է նկատի ունենալ, որ ընդհան-  
րապես մեծ մարդեր ունենալը կրճատում է թժբեր կազմելու  
դժվարին աշխատանքը, ի հաշիվ թժբերի, այնպես էլ անմի-  
ջական ցանքի տարածությունը, հնարավորություն է ստեղծվում  
բրնձի բերքահավաքը մեքենայացման ենթարկելը և այլն: Սա-  
կայն բոլոր պայմաններում էլ պետք է խիստ ուշադրություն  
դարձնել, որ մարդերն առաջին հերթին ունենան պահանջված  
ժամանակ համաչափ ջրվելու և ցամաքեցվելու մեծություն:  
Մարդերի թժբեր պետք է անել այնպես բարձրությամբ և  
հաստությամբ, որպեսզի ողողման ժամանակ մարդերի ամբողջ  
մակերեսի վրա պահպանվի 15—20 սմ. հաստությամբ ջրի շերտ  
և թույլ չարդի թժբերից ջրի Փխարացիային: Այդ նպատակին  
հասնելու համար անհրաժեշտ է, որ թժբերը լինեն ամուր և  
բարձր:

Դաշտում ջրի շերտի հաստությունը պահանջված բարձրու-  
թյան վրա պահպանելու համար պետք է բոլոր մարդերը ապա-  
հովել ջրչափ ձևով (водомерная рейка), որի վրա նշանակ-  
ված է լինում չափի ցուցանիշները: Այդ ձողերն ամրացնում են  
մարդերի վրա և նրա չափի ցուցանիշներով կարգավորում մար-  
դերում գտնված ջրի շերտի հաստությունը:

1881

1881

1881

Բրնձի ցանքսի համար հողի մշակման հիմնական խնդիրներն են՝ ստեղծել բույսերի արմատային սխտեմի կարգ, պոքման և հողում բիոքիմիական պրոցեսների համար լավագույն պայմաններ, պայքարել մոլախոտերի դեմ, ապահովել բույսերը անհրաժեշտ սննդանյութերով և այլն: Պարզ է, որ հողի մշակման այս կամ այն սխտեմի ընտրությունը և կիրառումը կախված է հողի ֆիզիկական ատանձնահատկությունից, մեխանիկական կազմից, բուսական ծածկոցից և այլն: Բրնձի համար խոշոր նշանակություն ունի ցրտահերկը: Ցրտահերկն անհրաժեշտ է կիրառել բրնձի ցանքսի համար նախատեսված բոլոր դաշտերում, բայց որում վաղը պետք կատարել վաղ աշնանը դաշտի բերքահավաքն ավարտելուց անմիջապես հետո:

Ցրտահատազտական հիմնարկների և բրնձացան ստաջավոր կոլխոսների փորձերը ցույց են տվել, որ աշնանը որակով և վաղ կատարված ցրտահերկը բրնձենու բերքատույնությունը բարձրացնում է 20—30 տոկոսով, դրա հետ միասին նպաստում է մոլախոտերի ստորերկրյա օրգանների չորացմանը և ոչնչացմանը:

Ցրտահերկի խորությունը պետք է լինի 22—25 սանտիմետրից ոչ պակաս: Այն հողամասերում, որտեղ վարելաչեբայ բարակ է, կամ ենթաշերտը խճային է, ցրտավարի խորությունը պետք է լինի այնքան, ինչքան թույլ է տալիս հողի վարելաչեբայի հզորությունը: Ապացուցված է, որ խոր վարի գեղարում մոլախոտերի սերմերը համարյա թե ամբողջովին ոչնչանում են, բացի այդ, խոր հերկը բավելիքն է բույսերի գարգացման սննդատույնի և այլ պայմանները: Բրնձացան չըջաններում մինչև հիմա գոյություն ունեցող արորով կատարվող հերկի պրակտիկան պետք է կատարելի կերպով վերացնել, որովհետև արորը լեկի չի կատարում լավորակ վարին առաջադրած խնդիրները: Բրնձին հատկացված հողերը ձմեռը չպետք է թողնել ջրի շերտի տակ:

Գարնանը երբ նկատվում են մոլախոտերի մասսայական ծիրի և հողը բեշեն է, պետք է դաշտը փոցխել, «Ձկնազգ» փոց-

խոյ: Գարնանը գրտավար ստացած հոյուն՝ փնասկար մոլախտների սերմերը ծլեցնելու և ապա նրանց ծիլերը ոչնչացնելու համար դաշտը պետք է շրել և մի բանի օրից հետո, կրք մոլախտների սերմերը, հատկապես սուլուֆիդերը, տալիս են մասնատված ծիլեր, կատարել կրկնավար 14—16 սմ. խորությամբ: Կրկնավարից անմիջապես հետո դաշտի կաշտերը փշրելու համար պետք է փշրել և սկսել մարգերի կառուցման ու հարթեցման աշխատանքները:

Բրնձի այն դաշտերը, որոնք զանազան սրածառներով չեն ենթարկվել ցրտավարի, վաղ դարձանը պետք է վարել 22—25 սանտիմետրից ոչ պակաս խորությամբ և հերկից հետո անմիջապես փոշրել:

Փոշրի միջոցով հերկից դուրս բաշված մոլախտների սրածառները պետք է հալարել և դաշտից հեռացնել: Գարնան: կառավարված խոր հերկը ցանքից 6—7 օր առաջ պետք է ենթարկել կրկնավարի և ապա փոշրել, որից հետո սկսել մարգերի կառուցման և հարթեցման աշխատանքները:

## ՍԵՐԱԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Բերքառախտի ընթացման գործում առանձնահատուկ տեղ է գրավում բրնձի սերմացուի որակը: Բրնձենու դաշտերը սովորաբար վարակված են լինում խիտ փնասկար մոլախտներով, հատկապես սուլուֆիդանազան տեսակներով: Դաշտի վարակման հիմնական աղբյուրներից մեկը անմաքուր սերմացուով կատարած ցանքն է: Նման գրուխտներ կանխելու համար մեհրաձեռն է, որ սերմացուն ցանքից առաջ լրիվ մաքրված լինի բոլոր տեսակի մոլախտների սերմերից, հատկապես սուլուֆիդից: Դրու համար պետք է սերմացուն գոյի չալթուկի գոհիչ մեքենայով, որի համար օգտադորձում են ՎԻՄ Ք<sub>2</sub> գոհիչը, իսկ կթի հնարությամբ չէ այդպիսին ձևով բերել, այն մամուսակ կարելի է օգտագործել նաև տրեկերները և սովորական քամահարները: Եթե նկատվի, որ մեքենաների անկանոնությունը հետևանքով սերմացուն մաքուր չի գոյում, այդ դեպքում դուրսը պետք է կատարել ձևաբով: Չալթուկի սերմացուն սուլուֆիդի լրիվ մաքրելու համար պետք է դաված սերմացուն ցանքի նախօրյակին վերջին

անգամ գտել աղելուծուցից: Աերմացուի դասան աղելուծուցի-  
քով կատարվում է հետեյալ ձևով:

Նախօրոք պետք է պատրաստել 3 տակառ, յուրաքանչյուր  
տակառի բարձրութիւնը կարելի է վերցնել 80—100 սանտիմետր,  
իսկ արմազները երկարութիւնը 55—60 սանտիմետր, որոնցից  
երկուսը սերմացուի անխիշական մաքրման համար է, իսկ եր-  
րորդն աղաջրի պաշարի համար:

Մեկ տակառի մեջ նրա տարուցիւթյան  $\frac{3}{4}$  չափով պետք է  
պատրաստել սովորական աղաջուր (կերակրի աղի լուծուցիք),  
1 կիլոգրամ չոր աղին վերցնելով 18 լիտր մաքուր ջուր:

Երրդ տակառի մեջ դարձյալ պետք է պատրաստել աղաջուր  
նույն հարաբերութեամբ: Այս անգամ տակառ պետք է լիքը  
լինի:

Սուաջին տակառի աղաջրի մեջ փայտե թիակով անդադար  
խառնելով պետք է կամաց ւննել զտման ենթակա սերմացուն  
մինչև տակառի լցվելը:

Լուծուցի երեսին հալաքված սուլուֆի սերմերը և բրնձի  
սերմացուի չմշկված ու անպետք հատիկները պետք է հետոց-  
նել ցանցանման շերտիով, մառլայով կամ մաղով:

Տակառի հատակին նստած չալթուկի սերմացուն նորէն  
թիակով լավ պետք է խառնել ու նորից լուծուցի երեսին հա-  
լաքված սերմերը հետացնել: Այս գործողութիւնները պետք է  
կրկնել այնքան անգամ, մինչև սերմացուն մաքուր գտի սուլու-  
ֆից և անպետք սերմացուի հատիկները:

Իրանից հետո սուաջին տակառի աղի լուծուցիքը պետք է  
դադարեղ կերպով տակառը և նրա մեջ երկրորդ տակառից պե-  
տացնել այնքան աղի լուծուցիք, մինչև տակառի մեջ լուծուցիք  
հասնի նրա բարձրութիւն  $\frac{3}{4}$ -ին, որից հետո զտման աշխատանք-  
ները պետք է սաննել այնպես, ինչպես ալ դեն նկարագրված է:

Սուաջին տակառում լուծուցի տակ նստած սերմացուն  
պետք է անխիշակա մաքուր ջրով այնքան լվանալ, մինչև որ  
լրիկ մաքրվի աղի հետքերից:

Որոշելու համար, թե սերմացուն ինչպես է ազատվել աղի  
լուծուցի հետքերից, պետք է լվացված սերմացուից մի քանի  
հատիկ դնել լեզվի վրա և ըստ այժմ համով որոշել աղի ներկա-  
ցութեանը:

ՏԻՄ պարզվեց, որ վաղցիւմ սերձացուի մեջ ղեւ աղ կա, այլ ղեւաբում նորից մաքուր ջրով շարունակել վաացումը:

Աերմացուի վաացումը աղաջրից կարելի է կատարել նաև հոսող ջրի մեջ. դրա համար վաացման ենթակա սերմացուն պետք է ամէլ ջրաթափանց տուրակների մեջ, տողրակի տարողութեան  $\frac{3}{4}$  չափով, բերանը կապել ու տուրակը ղեւել հոսող ջրի մեջ (սուվի կամ գետակի ջրի մեջ):

Անբախարար վաղցիւմ բրնձի սերմացուն կորցնում է իր ծլունահուսթյունը, դրա համար վաացումը պետք է անել խնամ խնամքով:

Լիսպումից հետո սերմանյութը պետք է փոխադրել դաշտ ու ցանել: Եթե աղի լուծույթի մեջ բրնձի սերմացուի դառնք կատարված է ցանքսից 2—3 քր առաջ, այլ ղեւաբում պետք է սերմացուն փոել շվաքէ տակ բարակ շերտով զու թիակով պարբերաբար խտնելով նրան լավ չորացնել ու սովորական կարգով պահել մինչև նրա ցանքի ժամանակը:

Անջատված սուլուֆի սերմացուն պետք է նույնպես վաանալ, չորացնել ու պահել անասնակերի համար: Սուլուֆը պետք է աղալ և հետո կերակրել անասուններին:

Սերմացուի որակը ստուգվում է անբ ստուգող լաբորատորիաների միջոցով: Բրնձի սերմացուի վերջին ստուգումը պետք է կատարել ցանքսից 15 օր առաջ: Եթե պարզվեց, որ սերմացուի ծլունահուսթյունը 85 տոկոսից ցածր է, այլ ղեւաբում այլ սերմացուն պետք է ի ստանել և միջկուլտուրային փոխանակման կարգով փոխարինել ավելի բարձր ծլունահուսթյուն ունեցող սերմացուով:

### ՑԱՆԻԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Բրնձի բերքատուութեան բարձրացման զործում վճռական նշանակութիւն ունի նաև ցանքի ժամանակը: Բազմաթիվ ղեւաուսթյունները և ստախանոփականների փորձերը ցույց են տվել որ տարբեր ժամկետներին կատարած բրնձի ցանքսերը իրենց բերքատուութեան քանակի և որակի տեսակետից տալիս են խոչոր տարբերութիւններ: Նկատված է, որ նորմալ ժամանակից ուշ կատարված ցանքսերի հասունացումը ուշանում է և

քերքահալաքը համընկնում է աշնան անբարենպաստ եղանակն-  
րին (անձրևներ, ցրտահարություն, ձյուն գալը և այլն)։ Դրա  
հետևանքով տեղի է ունենում բերքի մեծ կորուստ։ Բերքի  
դասի մասը փչանում է դաշտում։ Բացի այդ, բրնձի ուշ հաս-  
նելու հետևանքով դաշտը հնարավոր չի լինում դնելու ցրտա-  
հերկի տակ։ Այդպիսով, ինչպես ագրոտեխնիկական, այնպես էլ  
տնտեսական ու կադմակերպչական տեսակետից բրնձի ցանքի  
ժամանակը դառնում է դյուրամոնետական խիստ կարևոր ֆակ-  
տոր։

Հատուկ դաշտային և լարտրատոր փորձերի մեջոցով պարզ-  
ված է, որ չայթուկը նորձայ կերպով ծլում է, եթե հողի մեջ  
է—10 սանտիմետր խորություն շերտում տաքությունը հասնում  
է 12—14 աստիճան։ Օդերևութաբանական մի շարք տարիների  
առկայները ցույց են տվել, որ Արարատյան դաշտավայրում  
բրնձի ցանքի սկիզբը կարելի է համարել մայիսի մեկը, իսկ  
ավարտի մասին կարող ենք ասել մայիսի 10—20-ը։

### ՑԱՆՔԻ ԶԵՎԵՐԸ

Բրնձի ցանքը կարելի է կատարել թե բնի եկած ցամաքած  
հողում և թե ջրի մեջ։ Քեչի եկած հողում ցանքը կարելի է կա-  
տարել մեքենայով, ինչպես շարքացան, այնպես էլ շաղպան։

Ցանքը ջրի մեջ ընդհանրապես լինում է շաղպան, որը  
կատարվում է ձևերով չոր կամ թրջված սերմերով, մեքենայով  
և ինքնաթիռով։

Բրնձի ամենից լավ ցանքի ձևը համարվում է շարքացանով  
կատարած ցանքը, սերմերի խորությունը պահպանելով 1—2 սան-  
տիմետր։ Դիտողությունները ցույց են տվել, որ 3 սանտիմետր  
և ավելի խորություն մեջ ցանված սերմերը ապրիս են շատ նուր  
ցանք և դրանով զցում ցանքի լիարժեքականությունը։ Բրնձի  
ցանքը կատարվում է սովորաբար հացահատիկի շարքացանով,  
միայն ցանքի առաջ շարքացանի ցանող խոփիկներին կամ դե-  
կաթին հաղցնում են սահմանակամ թաթեր և հարմարություններ  
այն հայտով, որ սերմի խորությունը լինի 1—2 սանտի-  
մետրի սահմաններում։

Ցանքի միջաբային սաքամությունը պետք է լինի 12—13  
սանտիմետր։



Նկար 2. Իրնձի ցանքը արակտորային շարժացանով:

Յանքին ենթակա հողամասը եթե չտու խոնավ է համար՝  
դեբբայն առախնան ստոր են, որ հետքայնը չի օգտագործել  
շարժացանը, այդ դեպքում ցանքը կատարվում է շողացան:

Նարտակահարմար է շողացանը կատարել Չրի մեջ, ըստ  
որում ցանքից 2-3 օր առաջ մարդերում Չրի շերտը պետք է  
հասցնել 5 սանտիմետր հաստության: Չրի շերտը հիմնականում  
նպատակ ունի սերմը պահպանելու Չերմատիճանի ուժեղ տա-  
տանուժներից և դրանով իսկ արագացնելու նրա ծլումն ու  
յուրացումը:

Յանքսի ժամանակ մարդերի ջուրը տախանով կամ այլ մի-  
ջոցներով խիստ պղտորում են և այդ պղտոր վիճակում կատա-  
րում են չոր կամ թրջած սերմերով շողացան: Չուրը պղտորում  
են նրա համար, որպեսզի սերմացուն որոշ չափով ծածկվի ցեխի



Նկար 3. Եսթրաղանով կատարված բրնձենու դաշար

մեջ տեղի է բարակ շերտով, որը միանգամայն անհրաժեշտ պայման է նրա սրբապատկալման և թիփակալման համար:

### ՑԱՆՔԻ ՆՈՐՄԱՆ

Ցանքի նորմայի նշանակությունը կայանում է նրանում, որ փոխելով ցանքի նորման, փոխվում է նաև բույսերի քանակը ավելի տարածության վրա. դրանից էլ փոխվում է նրա սնման մակերեսը: Սերմի նորման որոշելու համար պետք է երևի այն դրությունից, թե ավելի հողագլխմայական պայմաններում մեկ միավոր հողատարածության վրա բույսի մ'ը քանակը կարող է բարեհաջող զարգանալ և տալ բարձր բերք, իսկ այդ քանակը սահմանելիս պետք է երևի հողի առանձնահատկություններից, ցանքի ժամկետից, սորտից, ցանքի ձևից և մի շարք այլ պայմաններից: Հայաստանի պայմանների համար օրինակից կերպով ցանքի նորման կարելի է ընդունել 120 կգ հեկտարին:

Նշված ցանքսի նորման նախատեսնված է բարձրորակ սերժա-  
ցուի համար, հետևապես ցածր ձևով հարկային դեպքում եթե  
կոնգրեսը թույլատրված է ցանկեր համար, պետք է համա-  
պատասխան բանակով ուղեւորել սերժացուի քանակը:

### ՊԱՅՔԱՐ ՄՈՒՆԻՏԵՐԻ ԴՆՄ

Նկատված է, որ հողի ճիշտ մշակման, սերժացուի մաքուր  
զտման և ոռոգվող ջրի շերտի պահպանման դեպքում բրնձենու  
ցանքը պակաս չափով է վարակված լինում մոլախոտերով: Եթե  
զարգում ենք աչքին մոլախոտեր, այն ծախսնակ պետք է ժամա-  
նակին և մաքուր կատարել բրնձենու դաշտի քաղհանը: Առանձ-  
նապես խիստ վնասակար մոլախոտ են բրնձի համար սուլուֆի  
տարրեր տեսակները, որոնք միամյա են և բազմանում են սեր-  
մով: Դրանց դեմ հիմնական պայքարը համարվում է խոյ  
ցրտափայրը, նախացանքային արագը, ջրի հատ շերտի պահպա-  
նումը (25—30 սմ.), ձևերի քաղհանը և ծաղկման շրջանում  
նրանց հուրանների հնձումն ու դաշտից հեռացումը: Սուլուֆի-  
քի տեսակները մանավանդ իրենց փոքր հասակում, շատ նման  
են բրնձենու բույսին: Որպեսզի քաղհանի ժամանակ բրնձի  
բույսը կարողանանք տարբերել սուլուֆից անհրաժեշտ է նրանց  
միմյանցից տարբերել հետևյալ նշաններով:

Բույսի օրգան- ները	Բրնձ	Բրնձի սու- լուֆ	Մեծահատիկ սուլուֆ	Սուլուֆ
Թուփը	Սեղմված	Սեղմված	Սեղմված	Ցրված
Տերեխերը	Բաց կոնա- չայույն, նեղ, երկար	Բաց գույնի, բան բրնձը, նեղ, երկար,	Այնլի մուգ, նեղ, երկար	Մուգ կանա- լայն, կարճ
Տերեխի թիթեղի հիմքը	Ներքի կող- մից լեզվակ և կողքից ակառքիկներ մազմը- զուկներով	Արտաքին կող- մից կոշտ մա- զեր	Առանց լեզվա- կի և մազերի	Առանց լեզ- վակի և մա- զերի
Տերեխի խոզու- վակը	Կանայ	Կանայ	Կարմիր	Կարմիր



Պատկեր 4. Բույսերի ծիւղերը և տերևի կտրվածքը, որտեղից տերևի թիթեղը աճեցնում է խողովակազույգում:

Բացի սուղուֆից բրնձի մոլախոտերից հայտնի են դանդաղ-դանդաղ, եղիզնը և ուրիշները: Դրանք բազմամուս են, գլխավորապես վեգետատիվ օրգաններով կոնցրված անոթներով, պայթեցնելով էջի շափուլ տերևերով: Դաշտում մոլախոտերի երևալուն պես պետք է ձև բով քաղհանել: Առաջին քաղհանք պետք է կատարել միջև բրնձնու թփնախալումը, երբ նկատվում են մոլախոտերը, ինչ կրկրորդ քաղհանք՝ երբ բրնձնին դանդաղ է ցողունակալման շրջանում: Քաղհանի Բամանակ պետք է բոլոր մոլախոտերը հանել արմատներով և դաշտից դուրս տանել չորացնելու համար: Զանգաի քաղհանի հետ միասին պետք է հնձել առունների և թմբերի վրա բուսած բոլոր մոլախոտերը:

Քաղհանը պետք է ավարտել միջև մոլախոտերի ծաղկումը: Առողջից ջրի հետ բերվող մոլախոտերի սերմերի մուտքը դաշտում խախտելու համար պետք է ջրուտը և ջրարաչիի նստուների մեծ դնել երկաթյա մանրանցք ցանց այն հաշվով, որ ջուրը թափվի ցանցի միջով և մոլախոտերի սերմերը ու դանդաղան մնացորդները մնան մաղի վրա ու հեռացվեն:

Բրնձի դաշտերում բարենպաստ պայմանների դեպքում շատ արագ դարձանում են ջրիմուռները, որոնք բրնձնու գարնացման առաջին շրջանում կարող են մեծ վնաս հասցնել բրնձի բույսին:

Առաջարկար սկզբից երևան են դալիսա մանր ջրիմուռները, որոնք ջրի երեսին առողջացնելով չորձային թաղանթ, փաթաթվում են բրնձի բույսերին և նրան մեծ չափով վնասում: Ջրիմուռ-



Նկար 5. Բրնձի հորանը



Նկար 6. Բրնձի սուլուֆի հորանը



Նկար 7. Մեծահատիկ սուլուֆի հուրանը.



Նկար 8. Սուլուֆի հուրանը.

ներն կրկնց հետագա դարպացման ընթացքում ավելի են դար-  
գանում և թեկածե դաթաթվելով իրար, առաջացնում են ջրի  
երեսի վրա խիտ ցանց: Ջրեմուտների գեմ պաշարի լավագույն  
միջոցը համարվում է պղնձի արջատոբ և ընդհատ սպողման  
պաշամաններում դաշտի սլարրերարար չորացումը:

### ՊԱՐԱՐՏԱՆՈՒՄԸ

Երնձեևու դաշտի սլարրարացումը տալիս է բերքի մեծ հա-  
գեղում: Առաջին հերթին պետք է պարարացնել բրնձեևու այն  
դաշտերը, որոնք երկու և ավելի տարիներ դառնել են անբու-  
հատ բրնձեևու ցանքան մասի: Հանքային սլարրարանյութերը  
տվելի ըարձը էֆեկտ են տալիս, եթե մտցվում են միասին:  
Հատկապես լավ է աղբում բերքատվության վրա աղստական և  
Փոսֆորական սլարրարանյութերի խառնուրդը:

Լավ արդյունք է ստացվում նաև, երբ Փոսֆորական և աղս-  
տական սլարրարանյութերի խառնուրդի մեջ մատնակցում է  
նաև կալիումական աղը: Ընդհանրապես ընդունված է բրնձացան  
կալիսպնեղում բրնձի դաշտը սլարրարացնել 20 տոկոսանոց  
տանջում սուլֆատով, հեկտարին տալով 450 կիլոգրամ և 14  
տոկոսանոց սուպերֆոսֆատով, հեկտարին տալով 450—650 կի-  
լոգրամ: Պարարանյութերի կեր պետք է սրայես սնուցում տալ  
մատասյական թիակայման ժամանակ: Պարարանյութերը պետք  
է մացնել մանրացած վիճակում, հանդարտ եղանակին: Մուռցման  
ժամանակ պետք է մարդկերում ջրի շեղար հասցնել 4—5 սմ.  
հաստության:

Մարզերի բույր անցքերը լավ փակելուց հետո պետք է ջրի  
վրա սլարրարանյութ շաղ տալ: Այդ ձևով արված սլարրարա-  
նյութը ջրի հետ ծծվում է հողի մեջ ու մատնելի դառնում  
բույսին:

Բուցի հանքային սլարրարանյութից ընձեևու բերքատվու-  
թյան բարձրացման վրա լավ ազդեցություն են ունենում նաև  
տեղական սլարրարանյութերը՝ գոմաղբը, թաչնաղբը, կոմպոս-  
տը, միջնակների թմբերի հողը, սուռների միջի տեղում և այլն:  
Գոմաղբը մտցվում է հեկտարին 30—40 տոնն, նա պետք է  
լավ փոսած հատուցացած լինի և իրեն մեջ չպարունակի սուլֆի

ներմեր: Իբրև համար անհրաժեշտ է սուրբֆի հատիկները մինչև անասուններին կերցնելը աղալ ու մանրացնել կամ խաշել:

Կարևոր պարարտանյութ է բրնձենու համար նաև կանաչ պարարտացումը: Պատերազմական տարիներում քիմիական պարարտանյութերի պակասության պատճառով պետք է մեծ տեղ տալ կանաչ պարարտացմանը և տեղական պարարտանյութերին:

Կանաչ պարարտացման համար կուլտուրայի ցանքը պետք է կատարել աշնանից (աշնան վիկ, սիսեռ և այլն) և բրնձենու ցանքից 10—15 օր ուսով կանաչ մասսան պետք է հերկել ու վարձածածկել: Հերկելուց հետո դաշտը 2—3 հետք պետք է փոցելի, որից հետո սովորական կարգով կատարել բրնձենու ցանքի աշխատանքները:

### ՅԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՌԹՅՈՒՆԸ

Փորձնական ավյալները և աղաջավոր կոլտոջների պրակտիկան ցույց են տվել, որ նույն հողամասը մի քանի տարի անընդհատ բրնձենու տակ դնելու հետևանքով ուժեղ կերպով պոկատում է նրա բերքատվությունը, որովհետև դաշտում ստաջանում է ճահճացման և աղիացման պրոցես և խիստ զարգանում են բքնձենու հատուկ մոլախոտերը:

Բրնձի ցանքը պետք է հերթափոխի բաղաձ ջրապահանջ կուլտուրաների հետ: Միայն այդպիսի պայմաններում բրնձենու բերքատվությունը կլինի բարձր և կայուն:

Յանքաշրջանառության մեջ սակայն ջրապահանջ կուլտուրաները կբարձրացնեն հողի բերքատվությունը, կմաքրեն դաշտը բքնձենու հատուկ մոլախոտերից և կկանխեն դաշտի ճահճացման ու աղիացման պրոցեսները: Բրնձի ցանքաշրջանառության մեջ մեկը մյուսին հաջորդող կուլտուրաները լինում են միամյա և բազմամյա:

Մեր բրնձացան շրջաններում մշակվող միամյա կուլտուրաներից բրնձենու լավ նախորդ կարող են հանդիսանալ բամբակը, բոստան-բանջարանոցային կուլտուրաները և կարտոֆիլը: Բացի շարքահերկ կուլտուրաներից, բրնձենուն կարող են լավ նախորդ հանդիսանալ նաև հացահատիկային կուլտուրաները, մանապանդ աշնան դարին և միամյա խոտերը: Յանքաշրջանառության

մեջ միամտա խոտերը ըստ արդյունք են տալիս, երբ այդպիսին-  
ընթացությամբ են սրպես կանաչ պարարտացում և ցանվում  
են աշնանը, օրինակ աշնան վիզը, ձմեռոց սիսեռը և սոյան:

Բազմամյա կուլտուրաներից բրնձի ցանքաչրջանառության  
մեջ կարող են լավ նախորդ հանդիսանալ սուժույտն ու երեքնու-  
կը: Երեքնուկը անհամեմատ ալիւի խոնավասեր է, քան սուժույ-  
տը: Սակայն մեր կլիմայական պայմաններում նպատակահար-  
մար է բրնձի ցանքաչրջանառության մեջ նախատեսել սուժույ-  
տը: Բրնձենու բերքատուության բարձրացման հիմնական լծակը  
պետք է համարել խոտադաշտային ցանքաչրջանառության կերտ-  
ումը: Երկրոյ պիտական պլաններից, կուլտուրի դարգացման հե-  
ռանկարներից և հաշիւ աննելով ջրային և հողակլիմայական  
տանձնահատկութունները, կախողը կարող է ընդունել 6—7—  
8 և այլ ախիւ խոտադաշտային ցանքաչրջանառություն: Իբրև  
օրինակ մենք նպատակահարմար ենք համարում Արարատյան  
դաշտավայրում բամբակաուժույտային ցանքաչրջանառության  
մեջ սահմանել կուլտուրաների հետևյալ հաջորդականությունը՝

1. Աշնանացան + սուժույտ:
2. Ասույտ
3. Ասույտ
4. Բամբակ
5. Բամբակ
6. Բրնձ (կանաչ պարարտացմամբ)
7. Բամբակ
8. Գալնանացան հոց, բուստան-բանջարանոցային և այլ  
կուլտուրաներ:

**Ցանքաչրջանառության** մեջ կուլտուրաների այդպիսի հա-  
ջորդականությունը նպատակ է բոլոր կուլտուրաների բերքատ-  
ուության սխտեմատիկ բարձրացմանը, հաջող լուծում է անսու-  
նակների խնդիրը, վերացնում է բրնձենու հատուկ մուսխոտերը  
և լավացնում հողի ստրուկտուրան և արտադրողականությունը:

Այդպիսի սկզբունքով կարելի է կերտակել նման այլ ախիւ  
ցանքաչրջանառություններ, երկրոյ կուլտուրաների հետ պայման-  
ներից:

Բրնձնու մշակման բոլոր աշխատանքներն մեջ ամենապատասխանատու, կարևոր և ամենի բարձր նրա բերքահավաքն է:

Բերքահավաքի կամպանյան ախարտում է և որոշում ամբողջ տարվա կատարած աշխատանքներն արդյունքները: Բրնձնու բերքահավաքի արդյունքներն Վրա ազդող հիմնական Փակտորներն են մեկը բերքահավաքի ժամանակն է: Գլխահետադարձ կան հիմնարկներն հատուկ ուսումնասիրության արդյունքները պարզել են, որ հասունացումն էլ վաղ, ինչպես և ուշ կատարած բերքահավաքը խիստ իջեցնում է բերքատվության չափը: Բրնձնու հասունացում պետք է համարել այն ժամանակ, երբ հատիկների մոտ 90 տոկոսը հասունացել են:

Հասունացումը արտահայտվում է հատիկի կարծրությամբ և դուրսով: Բրնձի բերքահավաքն ավելի ուշ ժամկետում կատարելու դեպքում հատիկները բնութագրվում են ամենաթեթև չափումն էլ և ստացվում են բերքում մեծ կորուստներ, մանաթանդ, երբ բերքահավաքը կատարվում է ձեռքով: Բրնձացան խոշոր սովխողների փորձը ցույց է տվել, որ մեքենայացման միջոցով բերքահավաքը կատարվում է շատ սեղմ ժամանակամիջոցում և խիստ իջեցնում կորուստի հնարավորությունը:

Կակայն ներկայումս գոյություն ունեցող բրնձնու մշակման եղանակը (երբ բրնձնուն հասկացնում են ճահճատ հողամասեր, մարդերը պատրաստվում են մանր, ատուները անց են կացնում անկանոն և այլն) հնարավորություն չի տալիս բրնձի բերքահավաքը ենթարկել մեքենայացման: Բրնձնու ընդհանուր ջրման նոր եղանակը, ցանքաշրջանառության մեջ բրնձնուն տեղ հասկացնելը, ինժեներական սխեմայի իրրեկացիան ցանցի կառուցումը և մի շարք նման ձևանորոգումները հնարավորություն են ստեղծում բերքահավաքը կատարելու կոմբայնով, սեղմ ժամկետում և անկորուստ:

Եթե կոլխոզը ստիպված է բրնձի բերքահավաքը կատարել ձեռքով, այդ դեպքում բերքի կորուստը կանխելու համար պետք է կիրառել հետևյալ միջոցառումները.

1. Բերքահավաքը կատարել խիստ սեղմ ժամկետում, ոչ ավելի քան 5 օրվա ընթացքում:

2. Անձրեային եղանակին բրնձի հավաք (հունձ) չկատարել:  
3. Եթե զանազան պատճառներից դրդված դաշտը գերհասունացել է ու թափվում է, պետք է բերքահավաքը կատարել միայն առափոտյան, երեկոյան կամ ամպոտ եղանակին:

4. Հնձից 2—3 օր հետո պետք է խուրձեր կապել: Խուրձերը չուտ չորացնելու համար պետք է կապել փոքր (15—20 սմ. տրամագծով) խրձեր և մարդից հանել դնել չոր տեղ առանձին-առանձին, հուրանները դեպի վեր:

5. Հնձից հետո կատարել թափված հուրանների հավաք:

6. Խուրձ սեղանի վրայ սայլերը ապահովել բրեզնեաներով կամ փայտաներով, սայլում խուրձերի տակը փռելու համար:

7. Բրնձենու խուրձերը ինքնատաքացումից պահպանելու համար դեղերը դնել բացառապես չոր խուրձերով, իսկ խոնավ խուրձերը ծածկոցների տակ կամ հատուկ տեղերում առանձին-առանձին չարել չորացնելու համար:

8. Կարման աշխատանքները արագ և անկորուստ կատարելու համար այդ աշխատանքը կատարել անուպաման կալսիչ ժեշքենաներով:

9. Խոնավ բրնձի բերքը—չալթուկը նախքան պահեստ տանելը լավ չորացնել:

10. Պահեստները նախօրոք լավ ախտահանել, հետո չալթուկը պահեստ տեղափոխել:

#### ՍԵՐՄԱՒԱՇՏԵՐԻ ԱՌԱՋՁԱՅՈՒՄԸ

Ամեն մի կոլտոգում յուրաքանչյուր տարի պետք է առանձնացնել առանձին սերմադաշտ: Սերմադաշտին հասկացվում է ամենալավ և բերրի հողամասը, որի տարածութունը պետք է կազմի ընդհանուր ցանքսի տարածության 10—14%—ը այն հարվով, որպեսզի հաջորդ տարում կոլտոգը լրիվ ապահովված լինի բարձրորակ սերմացուով:

Սերմադաշտի հողամասը պետք է ապահովված լինի ջրույր և ջրհավաք բարեկարգված ցանցով: Այդ խնդրում հասկացվես խոշոր, դեր է կատարում ջրհավաք առուների բարելավ գրությունը, որը կարևոր է դաշտը ժամանակին ցամաքեցնելու և բերքահավաքը օպտիմալ ժամանակ կատարելու համար:

Սերմադաշտերի ցանքը պետք է կատարել դաստորոտ, ապրո-  
րացիայի ենթարկված, բարձրորակ սերմացուով, որը մաքրված  
պետք է լինի մոլախոտերի և այլ սերմերի խառնուրդներից:

Սերմադաշտերը պետք է մշակել բարձրագույն ագրոտեխ-  
նիկայի պահանջների համաձայն, բոլոր աշխատանքները կատա-  
րելով սահմանված ժամկետին: Բերքահավաքից առաջ սերմա-  
դաշտը պարտադիր կարգով պետք է ենթարկել ապրոտրոցիայի  
և բերքահավաքը կատարել ունի ժամանակ, երբ բրինձը դոնվում  
է լրիվ հասունացման Փաղայում:

Սերմադաշտերի բերքահավաքը պետք է կատարել խիստ  
զգուշությամբ և միջոցներ ձեռք առնել, որպիսիք սերմացուն  
չխառնվի չարքային չալթուկի հետ: Բերքահավաքից առաջ  
պետք է սերմադաշտի չորս կողմից սահմանները մեկ մետր  
լայնությամբ հնձել մանդաղով և դաշտից հեռացնել ու առաձիճն  
ձեռնել, մանսվանդ այն մասը, որը կից է ճանապարհներին և  
անտեսական ցանքերին: Այդ աշխատանքը կատարելուց հետո  
միայն կարելի է սկսել սերմադաշտի հնձման աշխատանքները:

Սերմադաշտի հնձման աշխատանքը պետք է կատարել մե-  
քենայով: Այդպիսինի քաղաղայության դեպքում հունձը կարելի  
է կատարել և ձեռքով: Հնձած խուրձերը պետք է անպայման  
չորացնել բաց օդում կամ ծածկոցների տակ:

Երբ բրնձի խուրձերը բավարար չորանում են, անհրաժեշտ  
է կալսելով անմիջապես սկսել նրա կալսումը: Սկսված է, որ  
խոնավ չալթուկը կոյսելու ժամանակ մնասվածքներ է ստանում  
և անպետքանում սերմացուի համար: Հաճախ սերմադաշտի բեր-  
քահավաքը և կալսումը համընկնում են աշնան անձրևներին և  
չալթուկն ունենում է բարձր խոնավություն, որը խիստ անդրա-  
դառնում է սերմացուի որակի վրա: Փորձերով ապացուցված է,  
որ սերմացուն 15%-ից ավելի խոնավություն ունենալու դեպ-  
քում, ցածր վերձաստիճաններում կլրջնում է իր ծրունակու-  
թյունը, իսկ 15%-ից պակաս խոնավություն ունենալու դեպքում  
լրիվ պահպանում է իր ծրունակությունը: Այսակերպ պետք է  
անել այն եղբակացությունը, որ սերմացուն պահպանելու հա-  
մար անհրաժեշտ է կալսելուց հետո լավ չորացնել: Չորացումը  
որակով կատարելու համար օդապարծվում են չորանոցները,  
պահպանելով նրա շնմությունը 45 աստիճանից ոչ ավելի:

Նախքան սերմացուի պահեստ տեղափոխելը, պետք է սերմացուի օրահետար կարգի բերել, որի համար օրահանջվում է՝

1. Պահեստի հատակը, առաստաղը, պատերը, օդանցքները չափ մաքրել բոլոր տեսակի մնացորդներից, փոշուց:

2. Առաստաղների դեմ պայթարելու համար պետք է պահեստը ախանձանել ծծմբածխածնով կամ ըլրպիկիթիով և պատերը, առաստաղը սպիտակացնել թարմ կրաջրով:

Սերմացուն պահեստ տեղափոխելուց հետո պետք է սխտեմատիկ հետևել, որ սերմացուի ջերմաստիճանը չբարձրանա: Եթե նկատվեց, որ սերմացուի ջերմի ջերմաստիճանը սկսում է բարձրանալ, պետք է թիով խտնել; քամու առև և անպայման իջեցնել ջերմաստիճանը: Եթե սերմացուն նախօրոք լավ չորացրած է և պահեստն էլ չոր վիճակումն է գտնվում, այն դեպքում նման երևույթներ կրիք տեղի չեն ունենա:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՂՈՂՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հաշվի առնելով ջրփոքի կարևոր դերը ընդհատ ողողման պայմաններում, անհրաժեշտ է ջրփոքին նշանակել ցանքը մշակող օղակի ղեկավար, քանի որ նրա աշխատանքից և փորձառությունից է կախված բրնձի բարձր բերք ստանալը, դաշտը մոլախտակից ազատելը, ծախսվող աշխօրերի քանակը և այլն:

Օղակավար ջրփոքի ընարությունը կառարում է բրիգադավարը առաջնօրը և բարեխիղճ կոլտոգնիկներից և հաստատում է կոլխոզվարչությունը: Օղակավար ջրփոքը պետք է լավ իմանա բրնձենու մշակման ազդրտեխնիկան, իրբիգացիոն ցանցը խնամելու կարգը, իրեն ամբացրած հողամասի պրանձնահատկությունները և օղակում աշխատանքի կազմակերպման սխտեմը: Օղակավար-ջրփոքը բրիգադիբի և ազրոնոմի հետ միասին կազմում է աշխատանքի օրացուցային պլանը, ստանում է օղակին ամբացրած բրնձի ցանքի բերքատվության առաջնորդանքը և այլ առաջադրանքի հիման վրա պլանավորում է իր օղակի աշխատանքները: Նա աշխատանքները հանձնում է բրիգադիբին, հետևում է աշխօրերի ժամանակին և ճիշտ դրանցմանն ու ամբար պահում է օղակի աշխատանքի ղիսցիպլենան: Իր օղակի անդամներին հետ միասին կառարում է իրբիգացիոն ցանցի մաքրումը,

մերանորոգումը և մնացած ձեռքի աշխատանքները: Չբժան է-  
մանակամեկնոցում օղակավար-Ջրվորն օղակի աշխատանքների գե-  
ղակարման հետ միասին ինքն է անձամբ կատարում դաշտի ջր-  
ման աշխատանքը, կարգավորում է և հետևում ջրի շերտի  
բարձրացմանը, կատարում է ընդհատ ջրման գրամֆիկայի հա-  
մաձայն ողողման և ցամաքեցման խիստ պատասխանատու աշ-  
խատանքը, ստանց այդ աշխատանքը հանձնարարելու սուբյեկ-  
տին: Բերքաօլոթյան բարձրացման և օղակում աշխատանքի  
ճիշտ կարգակերպման համար պետք է լինուր տեսակի աշխա-  
տանքների համար սահմանել աշխատանքի նորմաներ: Բրիգադի-  
րը և վերջությունը պետք է ամենօրյա հսկողութուն ունենան  
օղակի կատարած ընդհատ ջրման աշխատանքների որակի մյուս:

Յուրաքանչյուր առանձին օղակ պետք է ստացրցման մեջ  
ձանի մյուս օղակների հետ և անպայման ստանա նախատեսված  
բերքաօլոթյունից ավելին:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008745

9160 2 fl. 60 4.

A <sup>ii</sup>  
18314